

տիոյ առաջնորդութենէն հրաժարականը կու տայ նոր-
ընտիր Պատրիարք Յակոբ Նալեանի 1741ին: Մովսէս
Վ. Պիպէոճեան, Կարնեցի Զեքովբէ Վ., Պահատուրեան
Պետրոս Վ. Առաջնորդ Գաղատիոյ, իւր օրերը: Նալեան
Պատրիարքի Նալաձանքն ընդդէմ Գաղատացի կաթո-
ղիկեայց. Նիկոմիդիոյ Առաջնորդ Աթանաս Վ. Առաջ-
նորդ Գաղատիոյ, արտորանք եւ մահ հայ կաթողիկեայ
եկեղեցականաց եւ աշխարհականաց. Հատըրճը օղլու
Կարապետ Վ.: Սարգիս 1742-1744 Նուիրակ Երուսա-
ղեմի Զմիւռնիոյ Թեմին մէջ: 1744ին Զմիւռնիոյ վրայէն
Վենետիկ կ'երթայ: Սարգսի աշակերտ Յովհ. Վ. Զմիւռ-
նիացի, Արքեպիսկոպոս Համթայ, կենսագրութիւնը:
Գր. Վ. Բաղինեան, Արքեպ. Կարնոյ, Զեմնադրիչ ի
Հոռմ. Կ. Պոլսեցի Յովհ. Վ. Տուրսունեան. Ստեփ. Վ.
Լեւոնցի: Սարգսի աշակերտը՝ Գաղատացի իգնատիոս
Վ., Կեսարացի Յովնան Վ. Արիմանեան, Գաղատացի
Էօրսէկճեան Պետրոս Վ.:

Սարգիս Կ. Պոլիս տարի մը ֆեալէն ետեւ
1738ին Կեսարիոյ աթոռէն կը հրաժարի՝ «ան-
կըրթելի Կեսարացւոց» ընթացքէն զըլուած. թէ-
պէտ Կեսարացիք ի զուր կ'աշխատին հրաժարա-
կանն ետ առնել տալու: Այսպէս Սարգիս 1730
— 38 Առաջնորդ էր Կեսարիոյ, որուն համեմատ
ուղղելու է Գեր. Տրդատ Եպ. Պալեանի կազմած
«Առաջնորդական յաջորդութիւնք Կեսարիոյ
Ս. Կարապետի վանուց» («Բիւզանդիոն» 1906
թ. 3073), որ Սարգսի յաջորդը՝ Աւետիք
Եպիսկոպոսը, անշուշտ կոլորտի աշակերտ, առաջ-
նորդ կը դնէ 1734էն սկսեալ:

Նոյն միջոցին Յակոբ Նալեան եւս կը հրա-
ժարի Գաղատիոյ աթոռէն, թէպէտ եւ Յակոբ
միշտ Պոլիս կը նստէր, եւ Գաղատիա փոխանորդ
մը կը դնէր, որ էր Երուսաղեմայ միաբան՝ գա-
ղատացի Պետրոս Վ. Պահատուրեան (Զամբեան,